ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 18.05.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 301-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Պավել Գյուլումյանի, խորհրդի անդամներ՝ Դավիթ Վարդիկյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռուբեն Հակոբյանի, Ռոման Ահարոնյանի, Էմին Բեգլարյանի և Արսեն Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով փաստաբան Զինա Միքայելի Ասատրյանի բողոքը (մուտք՝ 29.05.2026թ. № 1437-26) Պալատի նախագահի 18.05.2026 թվականի թիվ 301-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Զինա Միքայելի Ասատրյանը **(այսուհետև նաև՝ Դիմող կամ Բողոքաբեր)** դիմել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ)**՝ խնդրելով կարգապահական վարույթ հարուցել փաստաբան Սոնա Միքայելի Չիլինգարյանի (**այսուհետև նաև՝ Փաստաբան**) նկատմամբ:

Դիմողը հայտնել է, որ իր և Փաստաբանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակներում Փաստաբանը պետք է ներկայացներ Դիմողի իրավունքներն ու օրինական շահերը դատարանում: Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանին վճարվել է ընդհանուր 752.748,4 ՀՀ դրամ:

Դիմողի հիմնական դժգոհությունը վերաբերել է թիվ ՎԴ5/0237/05/23 վարչական գործով Փաստաբանի դատավարական գործողություններին: Մասնավորապես, Դիմողը նշել է, որ ՀՀ վարչական դատարանը 19.03.2024թ. որոշմամբ առաջարկել է հստակեցնել հետևանքների վերացման ածանցյալ պահանջը՝ նշելով, թե կոնկրետ որ իրավական

հետևանքներն են վիճարկվում: Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանը 15.04.2024թ. դատարան է ներկայացրել «Հստակեցում» վերտառությամբ փաստաթուղթ, որով թերի է հստակեցրել ածանցյալ պահանջը, քանի որ վիճարկել է միայն աճուրդի հիման վրա կնքված պայմանագիրը, սակայն չի վիճարկել աճուրդը:

Դիմողը նշել է, որ նշված թերացման հետևանքով ՀՀ վարչական դատարանը 04.07.2024թ. վճռով մերժել է ածանցյալ պահանջը՝ պատճառաբանելով, որ առքուվաճառքի պայմանագիրը հանդիսանում է աճուրդի հետևանք, և առանց աճուրդը վիճարկելու հնարավոր չէ անվավեր ճանաչել աճուրդի հիման վրա կնքված պայմանագիրը:

Դիմողը նաև պնդել է, որ Փաստաբանը փաստացի չի մասնակցել դատական նիստերին, չի տեղեկացրել գործի ընթացքի և դատական ակտերի մասին, չի տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը, չի հայտնել գործի հետագա վարումից հրաժարվելու մասին, ինչպես նաև չի վերադարձրել վճարված գումարի որևէ մաս:

Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև իրավական գնահատական տալ Փաստաբանի գործողություններին և արձանագրել, որ դրանք հիմք են բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու և նոր հայց ներկայացնելու համար:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, 18.05.2026 թվականի թիվ 301-Ա որոշմամբ **(այսուհետև նաև՝ Որոշում)** մերժել է Զինա Ասատրյանի դիմումի հիման վրա փաստաբան Սոնա Միքայելի Չիլինգարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը՝ «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>18.05.2026</u> **<u>թվականի թիվ</u>** <u>301-</u>**<u>Ա որոշման էությունը</u>**<u>.</u>

Որոշմամբ արձանագրվել է, որ Դիմողի կողմից Փաստաբանին վերագրվող հիմնական վարքագիծը՝ 15.04.2024թ. ներկայացված «Հստակեցում» վերտառությամբ փաստաթուղթը ենթադրաբար թերի ներկայացնելը, կատարվել է 15.04.2024թ., մինչդեռ Դիմողի դիմումը Պալատ մուտք է եղել 18.04.2026թ.: Հետևաբար նշված գործողության կատարման օրվանից անցել է «Փաստաբանության մասին» օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երկամյա առավելագույն ժամկետը:

Որոշմամբ նաև արձանագրվել է, որ անգամ եթե քննարկման առարկա դարձվի կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելու պահից հաշվարկվող վեցամսյա ժամկետը, ապա այդ ժամկետը ևս բաց է թողնվել, քանի որ Դիմողը Փաստաբանին վերագրվող վարքագծի և դրա դատավարական հետևանքների մասին տեղեկացել է առնվազն 2024թ. հուլիսի 17-ին՝ 04.07.2024թ. վճիռը ստանալու պահից, իսկ 2024թ. օգոստոսի 14-ին նշված վճիռը բողոքարկելու հանգամանքը լրացուցիչ հաստատում

է, որ այդ պահի դրությամբ Դիմողը տեղեկացված է եղել ինչպես առաջին ատյանի դատական ակտի, այնպես էլ դրան նախորդած դատավարական գործողությունների և դրանց դատավարական հետևանքների մասին:

Նույն պատճառաբանությամբ Որոշմամբ վաղեմության ժամկետն անցած է համարվել նաև դատական նիստերին չմասնակցելու, գործի հետագա վարում չիրականացնելու, վճարված գումարի մի մասը չվերադարձնելու և գործի ընթացքի վերաբերյալ Դիմողին չտեղեկացնելու վերաբերյալ պնդումների մասով:

Միաժամանակ Որոշմամբ նշվել է, որ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու պայմաններում Դիմումում նկարագրված հանգամանքներին և Փաստաբանի գործողությունների ըստ էության գնահատմանը անդրադարձ չի կատարվում, իսկ Պալատն իրավասու չէ իրավական գնահատականներ տալ փաստաբանի գործողություններին և արձանագրել դրանց հիմքով բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման հնարավորության փաստը:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 29.05.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ խնդրելով վերացնել Որոշումը և հարուցել կարգապահական վարույթ փաստաբան Սոնա Չիլինգարյանի նկատմամբ:

Բողոքաբերը, ըստ էության, պնդել է, որ Որոշումն անհիմն է, քանի որ Պալատը վաղեմության ժամկետը սխալ է հաշվարկել միայն 15.04.2024թ. «Հստակեցում» վերտառությամբ փաստաթղթի ներկայացման պահից՝ անտեսելով Փաստաբանին վերագրվող մյուս վարքագծերը:

Բողոքաբերը նշել է, որ իր դիմումը միայն 15.04.2024թ. ներկայացված փաստաթղթի ենթադրյալ թերությանը չի վերաբերել, այլ նաև այն հանգամանքներին, որ Փաստաբանը չի մասնակցել դատական նիստերին, չի տեղեկացրել գործի ընթացքի մասին, չի տրամադրել դատական ակտերի և գործի նյութերի պատճենները, չի հայտնել գործի վարումից հրաժարվելու մասին, չի կատարել պայմանագրով ստանձնած պարտականությունները և չի վերադարձրել իրեն վճարված գումարը:

Բողոքաբերը նաև նշել է, որ Փաստաբանի խախտումների իրական ծավալի և դրանց հետևանքների մասին տեղեկացել է միայն ավելի ուշ՝ այլ փաստաբանների միջոցով կամ դատական ակտերի հետագայում ուսումնասիրման արդյունքում, ուստի վաղեմության ժամկետը չէր կարող հաշվարկվել 2024թ. հուլիսից կամ օգոստոսից:

Բողոքաբերը պնդել է, որ փաստաբանական ծառայությունների մատուցման հարաբերությունները շարունակվել են, իսկ Փաստաբանի կողմից փաստաթղթեր չտրամադրելու, հաշվետվություն չներկայացնելու և գումարը չվերադարձնելու վարքագիծը շարունակական բնույթ է կրել, հետևաբար այդ դրվագների մասով վաղեմության ժամկետը

չի կարող համարվել անցած:

Բողոքաբերը նաև նշել է, որ Պալատը պարտավոր էր իրավական գնահատական տալ Փաստաբանի բոլոր գործողություններին, ուսումնասիրել պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման հարցը, պարզել մատուցված և չմատուցված ծառայությունների ծավալը, ինչպես նաև գնահատել, թե Փաստաբանի գործողությունները կարող են արդյոք հիմք հանդիսանալ դատավարական ժամկետների վերականգնման կամ նոր հայց ներկայացնելու համար:

4. **Փաստաբան Սոնա Չիլինգարյանի դիրքորոշումը**.

Փաստաբանից բացատրություն չի պահանջվել:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Դիմողի հիմնական դժգոհությունը սկզբնական դիմում կապվել է թիվ ՎԴ5/0237/05/23 վարչական գործով 15.04.2024թ. ներկայացված «Հստակեցում» վերտառությամբ փաստաթղթի ենթադրյալ թերության և դրա դատավարական հետևանքի հետ:

2. 15.04.2024թ. «Հստակեցում» փաստաթղթի ներկայացման պահին ավարտվել է այն դատավարական գործողությունը, որը Դիմողը ներկայացնում է որպես Փաստաբանի հիմնական մասնագիտական թերացում:

3. Դիմողը 04.07.2024թ. դատական ակտը ստացել է 17.07.2024թ.: Նշված դատական ակտով արդեն իսկ արտահայտված է եղել դատարանի գնահատականը ներկայացված ածանցյալ պահանջի վերաբերյալ:

4. 04.07.2024թ. դատական ակտով նաև արձանագրվել է, որ գործի դատաքննությունն իրականացվել է դատավարության մասնակիցների բացակայությամբ:

5. 04.07.2024թ. դատական ակտը Դիմողի կողմից բողոքարկվել է 14.08.2024թ.: Նշված հանգամանքը վկայում է, որ այդ պահի դրությամբ Դիմողը ծանոթ էր ինչպես դատական ակտի բովանդակությանը, այնպես էլ դրան նախորդած դատավարական գործողություններին և դրանց հետևանքներին:

6. Դիմողի բացատրություններից հետևում է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է այլ փաստաբանների կողմից: Հետևաբար Դիմողի համար առնվազն 2024թ. օգոստոսին ակնհայտ էր, որ Սոնա Չիլինգարյանը տվյալ դատավարական փուլում գործի հետագա վարում չի իրականացնում և վերաքննիչ բողոք չի ներկայացնում:

7. Դիմողը Պալատ դիմել է միայն 18.04.2026թ.՝ 29.04.2024թ. դատավարական գործողությունից հետո երկամյա ժամկետն անցնելուց հետո:

8. Դիմողի կողմից բողոքում վկայակոչվող «ուշ հայտնաբերելու» հանգամանքները հիմնականում վերաբերում են ոչ թե նոր փաստական իրողությունների ի հայտ գալուն, այլ դեռևս 2024թ. հայտնի դատավարական գործողություններին, դատական ակտերին և դրանց հետևանքներին հետագայում տրված իրավական գնահատականին:

4. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

«Փաստաբանության մասին» օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց երկու տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ Օրենքը նախատեսում է երկու ինքնուրույն վաղեմության ժամկետ՝ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելու պահից հաշվարկվող վեցամսյա ժամկետ և կարգապահական պատասխանատվության հիմքի ծագման պահից հաշվարկվող երկամյա առավելագույն ժամկետ: Վեցամսյա ժամկետը կապված է անձի կողմից ենթադրյալ խախտման հիմքում ընկած փաստական հանգամանքների հայտնաբերման հետ, իսկ երկամյա ժամկետը հանդիսանում է առավելագույն ժամկետ, որի լրանալուց հետո կարգապահական վարույթ հարուցվել չի կարող՝ անկախ այն հանգամանքից, թե դիմողը երբ է տվյալ վարքագիծը հայտնաբերել կամ երբ է լիարժեք գիտակցել դրա հնարավոր իրավական հետևանքները:

Այս առումով Խորհուրդը հիմնավոր է համարում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի այն եզրահանգումը, որ Դիմողի կողմից Փաստաբանին վերագրվող հիմնական վարքագիծը՝ 15.04.2024թ. «Հստակեցում» վերտառությամբ փաստաթուղթը ենթադրաբար թերի ներկայացնելը, կատարվել է հենց 15.04.2024թ.: Այդ պահից սկսած

ենթադրյալ կարգապահական խախտման հիմքը, Դիմողի ներկայացրած փաստական նկարագրությամբ, արդեն իսկ ծագած է եղել: Հետևաբար Դիմողի կողմից Պալատ 18.04.2026թ. դիմելու պահին Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված երկամյա առավելագույն ժամկետն անցած է եղել:

Բողոքաբերի այն փաստարկը, թե Պալատը վաղեմության ժամկետը սխալմամբ կապել է միայն 15.04.2024թ. «Հստակեցում» փաստաթղթի հետ, հիմնավոր չէ: Դիմողի սկզբնական դիմումի բովանդակությունից հետևում է, որ հենց 15.04.2024թ. ներկայացված «Հստակեցում» փաստաթուղթն է ներկայացվել որպես Փաստաբանի մասնագիտական հիմնական թերացում, իսկ մնացած հանգամանքները՝ դատական ակտի բացասական հետևանքը, գործի հետագա վարումը, գումարի վերադարձի հարցը և նյութեր չտրամադրելու պնդումները, մեծ մասամբ ներկայացվել են այդ հիմնական վարքագծի հետևանքով կամ դրանից բխող հանգամանքներ:

Այլ կերպ ասած՝ Դիմողը 2026թ. չի ներկայացրել նոր կարգապահական հիմք, այլ 2024թ. կատարված և 2024թ. դատական ակտերով արտահայտված դատավարական գործողություններին հետագայում տվել է առավել ընդարձակ իրավական գնահատական: Նույն փաստական հիմքին հետագայում նոր իրավական ձևակերպումներ տալը կամ դրա իրավական հետևանքներն ավելի ուշ ընկալելը չի կարող վերականգնել Օրենքով սահմանված վաղեմության ժամկետը կամ հիմք հանդիսանալ վաղեմության ժամկետի հաշվարկը ավելի ուշ պահից կատարելու համար:

Խորհուրդն ընդունելի չի համարում Բողոքաբերի այն փաստարկը, որ Փաստաբանին վերագրվող վարքագծի հետևանքները վերջնականապես հաստատվել են միայն Վճռաբեկ դատարանի որոշմամբ, և այդ պատճառով վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի այդ որոշման կայացման պահից:

Վճռաբեկ դատարանի որոշմամբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կամ դատավարական հետևանքի վերջնական դառնալը չի նույնանում կարգապահական պատասխանատվության հիմքի հայտնաբերման պահի հետ: Կարգապահական վարույթի հարուցման վաղեմության ժամկետի հաշվարկի համար էական է ոչ թե այն պահը, երբ դատավարական հետևանքը դարձել է վերջնական կամ Դիմողը ստացել է դրա իրավական հաստատումը, այլ այն պահը, երբ Դիմողը տեղեկացել կամ օբյեկտիվորեն կարող էր տեղեկանալ Փաստաբանին վերագրվող վարքագծի փաստական հանգամանքներին:

Սույն դեպքում այդ փաստական հանգամանքները Դիմողին հայտնի կամ առնվազն օբյեկտիվորեն հասանելի էին դեռևս 2024թ. հուլիս-օգոստոս ամիսներին, քանի որ Դիմողը ստացել էր 04.07.2024թ. դատական ակտը, որով դատարանը գնահատական էր տվել ներկայացված ածանցյալ պահանջին, ինչպես նաև հետագայում բողոքարկել էր այն: Հետևաբար Վճռաբեկ դատարանի հետագա որոշումը կարող էր միայն հաստատել արդեն առաջացած դատավարական հետևանքը, սակայն չէր կարող նորովի ստեղծել կամ նոր

հայտնաբերված դարձնել Փաստաբանին վերագրվող վարքագծի փաստական հիմքը:

Հակառակ մեկնաբանությունը կնշանակեր, որ կարգապահական պատասխանատվության վաղեմության ժամկետը կախվածության մեջ է դրվում քաղաքացիական կամ վարչական գործի հետագա դատավարական ընթացքից և կարող է անորոշ ժամկետով երկարաձգվել մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի կայացումը, ինչը չի բխում «Փաստաբանության մասին» օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասի իմպերատիվ կարգավորումից:

Խորհուրդը հիմնավոր է համարում նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահի այն եզրահանգումը, որ նույնիսկ վեցամսյա ժամկետի հաշվարկի դեպքում Դիմողի դիմումը ներկայացվել է ուշացումով:

Դիմողը 04.07.2024թ. դատական ակտը ստացել է 17.07.2024թ.: Նշված դատական ակտով արդեն իսկ արտահայտվել էր դատարանի գնահատականը Դիմողի կողմից ներկայացված ածանցյալ պահանջի վերաբերյալ: Դատական ակտից պարզ էր, թե դատարանն ինչ պատճառաբանությամբ է մերժել ածանցյալ պահանջը և ինչ նշանակություն է տվել աճուրդը չվիճարկելու հանգամանքին: Հետևաբար այդ պահից Դիմողի համար հայտնի կամ առնվազն օբյեկտիվորեն հասանելի էին այն փաստական հանգամանքները, որոնք նա հետագայում ներկայացրել է որպես Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հիմք: Ավելին, 04.07.2024թ. դատական ակտը Դիմողի կողմից բողոքարկվել է 14.08.2024թ.: Նշված հանգամանքը վկայում է, որ Դիմողը կամ նրա նոր ներկայացուցիչները տվյալ պահի դրությամբ ծանոթացել էին ոչ միայն դատական ակտի եզրափակիչ մասին, այլև դրա պատճառաբանություններին, գործի քննության ընթացքին և ներկայացված դատավարական փաստաթղթերին: Հետևաբար Դիմողի այն պնդումը, թե Փաստաբանի գործողությունների բնույթը և հետևանքներն իրեն հայտնի են դարձել միայն 2026թ., չի համապատասխանում գործում առկա նյութերով հաստատվող հանգամանքներին:

Խորհուրդը հատուկ արձանագրում է, որ կարգապահական պատասխանատվության հիմքը «հայտնաբերել» նշանակում է տեղեկանալ կամ օբյեկտիվորեն հնարավորություն ունենալ տեղեկանալու այն փաստական հանգամանքներին, որոնք անձը համարում է կարգապահական խախտման հիմք: Այն չի կարող նույնացվել փաստաբանի գործողություններին հետագայում տրված իրավական գնահատականի, այլ փաստաբանի խորհրդատվության կամ դատական ակտերի հետագա իրավաբանական վերլուծության հետ: Եթե անձը 2024թ. արդեն ստացել է դատական ակտը, բողոքարկել այն և նոր փաստաբանների միջոցով շարունակել գործի պաշտպանությունը, ապա նա չի կարող 2026թ. նույն փաստական հանգամանքների իրավական վերլուծությունը ներկայացնել որպես կարգապահական հիմքի նոր հայտնաբերում:

Բողոքաբերի այն փաստարկը, թե Փաստաբանը չի մասնակցել դատական նիստերին, ևս չի կարող հանգեցնել Որոշման վերացման: 04.07.2024թ. դատական ակտում արձանագրվել է, որ գործի դատաքննությունն իրականացվել է դատավարության մասնակիցների բացակայությամբ: Դիմողը նշված դատական ակտը ստացել է 17.07.2024թ. և այն բողոքարկել է 14.08.2024թ.: Հետևաբար դատական նիստերին Փաստաբանի չմասնակցելու հանգամանքը Դիմողի համար հայտնի էր կամ առնվազն պետք է հայտնի լիներ դեռևս 2024թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Այդ պայմաններում այդ դրվագի մասով վեցամսյա ժամկետը ևս ակնհայտորեն անցած է եղել մինչև Պալատ դիմելը:

Բողոքաբերի այն պնդումը, թե Փաստաբանը չի տեղեկացրել գործի ընթացքի մասին, չի տրամադրել դատական ակտերը կամ նյութերը, նույնպես չի կարող դիտվել որպես 2026թ. հայտնաբերված նոր ինքնուրույն կարգապահական հիմք: Նախ՝ Դիմողը 2024թ. ստացել է դատական ակտը և այն բողոքարկել է: Երկրորդ՝ վերաքննիչ բողոքը այլ փաստաբանների կողմից ներկայացվելու հանգամանքը վկայում է, որ գործի դատավարական վիճակի, առաջին ատյանի դատական ակտի և բողոքարկման անհրաժեշտության մասին Դիմողը կամ նրա ներկայացուցիչները տեղեկացված են եղել դեռևս 2024թ.:

Խորհուրդը ընդունելի չի համարում նաև այն փաստարկը, թե փաստաթղթերը չտրամադրելու կամ հաշվետվություն չներկայացնելու վերաբերյալ պնդումները շարունակական խախտումներ են, որոնց մասով վաղեմության ժամկետ չի անցել: Շարունակական խախտում կարող է քննարկվել այն դեպքում, երբ փաստաբանի կողմից առկա է նոր կամ շարունակվող ինքնուրույն պարտականության ակնհայտ և կոնկրետ չկատարում: Մինչդեռ սույն դեպքում Դիմողի փաստարկները հիմնականում վերաբերում են նույն գործի 2024թ. դատավարական ընթացքին, 2024թ. դատական ակտին և դրան հաջորդած բողոքարկման փուլին: Միայն այն հանգամանքը, որ Դիմողը հետագայում շարունակում է դժգոհ մնալ փաստաթղթերի փոխանցման, տեղեկացման կամ հաշվետվության ծավալից, բավարար չէ օրենքով սահմանված վաղեմության ժամկետի սկիզբը անորոշ ժամկետով հետաձգելու համար:

Նույնը վերաբերում է վճարված գումարը կամ դրա մի մասը վերադարձնելու վերաբերյալ պնդմանը: Եթե Դիմողը համարում էր, որ Փաստաբանը չի մատուցել այն ծառայությունները, որոնց համար վճարվել է, կամ որ Փաստաբանը գործի հետագա վարում չի իրականացրել, ապա այդ հանգամանքը նրան հայտնի էր առնվազն այն պահից, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է այլ փաստաբանների կողմից: Այդ պահից Դիմողի համար ակնհայտ էր, որ Սոնա Չիլինգարյանը վերաքննիչ բողոք չի ներկայացնում և տվյալ դատավարական փուլում գործի հետագա վարում չի իրականացնում: Հետևաբար, եթե Դիմողը գտնում էր, որ այդ հանգամանքով պայմանավորված վճարված գումարի որևէ

մասը պետք է վերադարձվեր, ապա այդ փաստական հիմքը ևս նրան հայտնի էր դեռևս 2024թ. օգոստոսին:

Խորհուրդն անհիմն է համարում նաև Բողոքաբերի այն դիրքորոշումը, թե Պալատը պարտավոր էր ըստ էության իրավական գնահատական տալ Փաստաբանի բոլոր գործողություններին՝ անկախ վաղեմության ժամկետի անցնելու հանգամանքից: Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետները իմպերատիվ են: Դրանց անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Հետևաբար, երբ Պալատը արձանագրում է, որ կարգապահական վարույթ հարուցելու համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետն անցած է, այն այլևս պարտավոր չէ և իրավասու չէ նույն վարույթի շրջանակում ըստ էության գնահատել Փաստաբանին վերագրվող վարքագծի կարգապահական բնույթը:

Հակառակ մոտեցումը կհանգեցներ նրան, որ վաղեմության ժամկետների իմպերատիվ կարգավորումը կդառնար ձևական, քանի որ յուրաքանչյուր դեպքում Պալատը ստիպված կլիներ ժամկետանց դիմումների հիման վրա ըստ էության գնահատել փաստաբանի վարքագիծը, այն դեպքում, երբ օրենքն ուղղակիորեն արգելում է նման ժամկետանց հիմքով կարգապահական վարույթի հարուցումը:

Խորհուրդը նաև հիմնավոր է համարում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի այն եզրահանգումը, որ Պալատը իրավասու չէ արձանագրել, թե Փաստաբանի գործողությունները կարող են հիմք հանդիսանալ բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու կամ նոր հայց ներկայացնելու համար: Դատավարական ժամկետների վերականգնման, նոր հայց ներկայացնելու թույլատրելիության, դատական ակտերի իրավաչափության կամ դատավարական գործողությունների իրավական հետևանքների գնահատումը գտնվում է համապատասխան դատարանի իրավասության շրջանակում: Պալատի կարգապահական գործառույթը չի կարող փոխարինել դատարանի լիազորություններին և չի կարող օգտագործվել որպես դատավարական ժամկետների վերականգնման կամ դատական ակտերի վերանայման նախապայման ստեղծելու միջոց:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ Բողոքաբերի ներկայացրած նոր բողոքում առկա են այնպիսի փաստարկներ, որոնք չեն համադրվում նրա սկզբնական դիմումի և բացատրությունների բովանդակության հետ: Մասնավորապես, եթե սկզբնական դիմումով Դիմողը արդեն իսկ ներկայացրել էր 15.04.2024թ. «Հստակեցում» փաստաթղթի ենթադրյալ թերությունը, դրա կապը 04.07.2024թ. դատական ակտի հետ և նշվածի հետևանքով պատճառված վնասի մասին պնդումը, ապա հետագայում չի կարող հիմնավոր կերպով պնդել, թե նույն հանգամանքների փաստական հիմքը իրեն հայտնի է դարձել միայն 2026թ.: Նույն կերպ, եթե Դիմողը կամ նրա նոր ներկայացուցիչները 2024թ. օգոստոսին արդեն ներկայացրել էին վերաքննիչ բողոք, ապա ակնհայտ է, որ այդ պահի

դրությամբ նրանց հայտնի էին գործի ընթացքը, դատական ակտի պատճառաբանությունը, Փաստաբանի կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու հանգամանքը և գործի հետագա վարումը այլ ներկայացուցիչների միջոցով իրականացնելու փաստը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.05.2026թ. թիվ 301-Ա որոշումը կայացվել է Օրենքի պահանջներին համապատասխան, Դիմողի կողմից ներկայացված բողոքի փաստարկները չեն հիմնավորում նշված որոշման վերացման անհրաժեշտությունը, իսկ փաստաբան Սոնա Միքայելի Չիլինգարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Օրենքով սահմանված վաղեմության ժամկետներն անցած են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 39.11-րդ հոդվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ մասերով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.05.2026 թվականի «Փաստաբան Սոնա Միքայելի Չիլինգարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 301-Ա որոշման դեմ Զինա Միքայելի Ասատրյանի կողմից 29.05.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.05.2026 թվականի թիվ 301-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Պավել Գյուլումյան**

29 հունիսի 2026թ.
թիվ ԿԳ/15-Ա
ք. Երևան